ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հաղորդակցության փորձագետի ներգրավում՝ հաղորդակցության ռազմավարության, արտաքին հաղորդակցության գործողությունների ծրագրի և բրենդինգի մշակման համար

«ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպությունը նախատեսում է ներգրավել հաղորդակցության փորձագետ՝ 2026-2028 թվականների համապարփակ հաղորդակցության ռազմավարություն մշակելու, դրա հիման վրա 2026 թվականի արտաքին հաղորդակցության գործողությունների ծրագիր ձևավորելու, ինչպես նաև կազմակերպության բրենդբուքի վերանայման և թարմացման համար: Գործընթացը կիրականացվի առցանց ձևաչափով՝ սերտ համագործակցությամբ կազմակերպության թիմի հետ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿ

Մշակել ժամանակակից մեթոդներ ու տեխնոլոգիաներ ներառող հաղորդակցության ռազմավարություն՝ նպատակ ունենալով բարելավել կազմակերպության տեսանելիությունն ու համագործակցությունը շահակիցների հետ: Հիմնվելով ռազմավարության վրա՝ կազմել հաղորդակցության տարեկան գործողությունների պլան և ապահովել բրենդային հաղորդակցության միասնականություն՝ թարմացված բրենդբուքի միջոցով:

I. ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

<u>1. 2026-2028 թթ. հաղորդակցության ռազմավարություն</u>

Ձևաչափ: Առցանց, ըստ կարիքի անցանց

Նպատակ: Մշակել ժամանակակից մոտեցումներին ու տեխնոլոգիաներին համապատասխան հաղորդակցության ռազմավարություն՝ ներառյալ բյուջեն, որը կբարձրացնի կազմակերպության տեսանելիությունը, կուժեղացնի դոնորների և շահակիցների հետ համագործակցությունը և կստեղծի երկարաժամկետ հաղորդակցության կայուն համակարգ:

Արդյունքներ (Output):

- Հաղորդակցության ռազմավարություն (2026-2028)
- Հաղորդակցության ռազմավարությանը կից հավելյալ փաստաթղթեր, ներառյալ կազմակերպության հաղորդակցության գործողությունների գրանցամատյանի ձևաչափ
- Աշխատանքային հանդիպումների օրակարգ (ըստ կարիքի)
- Աշխատանքի կատարման վերաբերյալ հաշվետվություն՝ ներառյալ բոլոր գործողությունները և արդյունքները

Ժամկետ:

Աշխատանքները պետք է կատարվեն պայմանագրի կնքումից հետ 7 ամսվա ընթացքում:

<u>2. 2026թ. արտաքին հաղորդակցության գործողությունների ծրագիր</u>

Ձևաչափ: Առցանց, ըստ կարիքի անցանց

Նպատակ: Ապահովել հաղորդակցության ռազմավարության գործնական իրականացումը՝ տարեկան պլանավորման միջոցով (ներառյալ բյուջեն), որն ուղղված կլինի թիրախային լսարանի ներգրավմանը, սոցիալական մեդիա հարթակներում ակտիվության բարձրացմանը և կազմակերպության հիմնական հաղորդագրությունների շարունակական տարածմանը։

Արդյունք (Output):

- Արտաքին հաղորդակցության գործողությունների ծրագիր (2026թ.)

  Նշում. Այն պետք է խթանի կազմակերպության սոցիալական մեդիայում առկա էջերի առաջխաղացումն ու հետևորդների ավելացումը։
- Աշխատանքի կատարման վերաբերյալ հաշվետվություն՝ ներառյալ բոլոր գործողությունները և արդյունքները

Ժամկետ:

Աշխատանքները պետք է կատարվեն 4 ամվա ընթացքում։

3.Վերանայել և թարմացնել կազմակերպության բրենդբուքը, սահմանել հաղորդակցային նյութերի բովանդակային և դիզայնի ստանդարտները և մշակել դրանց արդյունավետության գնահատման համակարգ

Չնաչափ: Առցանց, ըստ կարիքի անցանց

Նպատակ: Ապահովել հաղորդակցային նյութերի բովանդակային և տեսողական միասնականություն՝ համապատասխանեցնելով կազմակերպության առաքելությանը և արժեքներին, ինչպես նաև բարձրացնել բրենդային հաղորդակցության պրոֆեսիոնալ մակարդակը՝ հաստատված ուղեցույցների և ստանդարտների կիրառմամբ։

Արդյունք (Output):

- Թարմացված բրենդբուք և գրաֆիկական ուղեցույցներ
- Առնվազն 5 ձևավորված հաղորդակցային նյութ

Ժամկետ:

Աշխատանքները պետք է կատարվեն 2 ամվա ընթացքում։

II. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՀԱՄԱՐ

- Առնվազն 5 տարվա փորձ՝ հաղորդակցության ոլորտում, նախընտրելի՝ ՔՀԿ միջավայրում
- Հաղորդակցության ռազմավարությունների մշակման փորձ
- Բրենդային նյութերի մշակման փորձ, ներառյալ բրենդբուքի ձևավորում
- Քաղաքացիական հասարակության կազմակերպություններում աշխատանքի առնվազն 5 տարվա փորձ
- Թվային հաղորդակցության հմտություններ (սոցիալական մեդիա, վերլուծություն և տեխնոլոգիաներ)
- Հայերեն հաղորդակցման գերազանց հմտություններ
- ՔՀԿ ոլորտի տեղական առանձնահատկությունների իմացություն

III. ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հետաքրքրված անձինք կարող են ներկայացնել իրենց հայտերը հետևյալ փաթեթով՝ էլեկտրոնային տարբերակով՝ նշված էլ. հասցեին ուղարկելով մինչև **հունիսի 11-ը, ժամը 23:59-ն.**

1. Հետաքրքրության նամակ (ներկայացնելով առաջադրանքի կատարման մոտեցումը, նախկին փորձառությունը),
2. Ինքնակենսագրական (CV),
3. Գնային առաջարկ՝ հարկերը ներառյալ,
4. Նախկին նմանատիպ փորձի օրինակներ՝ ցանկալի է հղումներով կամ հավելվածով,
5. Նակինում կատարած աշխատանքների պատվիրատուներից առնվազն 2 կոնտակտային տվյալներ երաշխավորման համար։

Դիմումները ուղարկել՝ info@ngoc.am էլ. փոստի հասեցին։ Նամակի վերնագրում նշելով «Comms Expert _ Անուն, ազգանուն»։

Նշում. Տեխնիկական սխալներով, ինչպես նաև վերջնաժամկետը լրանալուց հետո ուղարկված դիմումները չեն անցնի բովանդակային դիտարկման փուլ։